ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ՀՀ-ՏՄԴՀ-ԳՀԱՇՁԲ-20/19-1»

ք. Դիլիջան «21» 08 2020թ.

Դիլիջանի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Արմեն Սանթրոսյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու 1), «Ռազմավարական զարգացման գործակալությունե ՀԿ, ի դեմս նախագահ՝ Մ.Այվազյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու 2), որի անունից հանդես է գալիս լիազորված անձ՝ Գ. Թովմասյանը մի կողմից, և ,,Արտշին -1,, ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ալվարդ Դավթյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված համայնքային արոտների հասանելիության մեծացման նպատակով անհրաժեշտ ենթակառուցվածքների (ջրելատեղի, արոտ տանող դաշտամիջյան ճանապարհ, ոչխարի լողարան) աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուները պարտավորվում են ընդունել կատարված աշխատանքը վճարել մրցույթում առաջարկված գնի (առանց ԱԱՀ) 10/90 համաֆինանսավորմամբ (10% Պատվիրատու 1-ի և 90 % Պատվիրատու 2՝ (վճարումը՝ համաձայն 5.1 կետի):

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 01.11.2020թ.:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 75 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 1095 օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 3 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով

սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր վճարման ենթակա գումարը 10 չափաբաժնի համար կազմում է **2550000** (երկու միլիոն հինգ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ այդ թվում համայնքի կողմից վճարման ենթակա 10 % մասնաբաժնի համար հասանելիք ԱԱՀ-ն **50000** (հիսուն հազար) ՀՀ դրամ:

- Պատվիրատու 1-ի վճարման ենթակա ընդհանուր գումարը կազմում է **300000** (երեք հարյուր հազար) ՀՀ դրամ, այդ թվում 50000 (հիսուն հազար) ՀՀ դրամ ԱԱՀ
- Պատվիրատու 2-ի վճարման ենթակա ընդհանուր գումարը կազմում է **2250000** (երկու միլիոն երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ, **առանց ԱԱՀ**

Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.1.2 Համաձայն վճարման ժամանակացույցի(Հավելված 3) Կապալառուն կատարված աշխատանքների համար ներկայացնելու է 2 կարգի հաշիվ ապրանքագրեր՝

- Պատվիրատու 1-ին՝ հարկային հաշիվ ներառյալ ԱԱՀ,
- Պատվիրատու 2-ին՝ հաշվարկային փաստաթուղթ առանց ԱԱՀ, որն ել իր հերթին պարտավորվում է ներկայացնել Կառավարության 26 փետրվարի 2004թ-ի 256-Ն Որոշման համաձայն ԱԱհՀ-ից ազատման վերաբերյալ տեղեկանք

Պատվիրատուները վճարումը կիրականացնեն Կապալառուի կողմից ներկայացված հանձնման- ընդունման արձանագրության և հաշիվ ապրանքագրի հիման վրա:

5.1.3 Վճարման ներկայացված յուրաքանչյուր հանձնման- ընդունման արձանագրություն հաշվարկվում է Աշխատանքների Ծավալի և Արժեքի տեղեկագրի հիման վրա, որը Կապալառուի կողմից ներկայացվում է սույն պայմանագրի պահանջների համաձայն: Աշխատանքների Ծավալի և Արժեքի տեղեկագիրը պետք է արտացոլի ողջ Պայմանագրի Արժեքի բաշխումը ըստ աշխատանքի առանձին փուլերի և ներկայացվի այն տեսքով և ժամկետներում, որոնք կերաշխավորեն դրա գործնական կիրառումը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և

դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ 1

Դիլիջանի համայնքապետարան
Ք. Դիլիջան, Մյասնիկյան 55
ՀՎՀՀ 07618909
ՀՀ 900402051248
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն

Համայնքի ղեկավար Ա. Մանթրոսյան
_____
/ստորագրություն/
Կ.Տ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ 2

<<Ռազմավարական զարգացման գործակալություն>> ՀՀԿ
Բանկը՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050022400701001
ՀՎՀՀ 01831308

Նախագահ՝ _____
Լիազորված անձ _____
_____
/ստորագրություն/

ԿԱՊԱԼԱՌՈՒ

,,Արտշին-1,, ՍՊԸ
Ք. Երևան, Կարապետյան 9
ՀՎՀՀ 01277633
ՀՀ 11811006695800
«ԱՅԴԻ բանկ» ՓԲԸ

Տնօրեն Ա. Դավթյան
_____
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 1
«21» 08 2020թ. կնքված
ՀՀ-ՏՄԴՀ-ԳՀԱՇՁԲ-20/19-1 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*
«Դիլիջան համայնքի Գոշ բնակավայրի ,,Եղջերվասար,, արոտավայրի ջրագծի և ջրախմոցի կառուցում»
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

Պատվիրատու 1
Դիլիջանի համայնքապետարան

	NN	Աշխատանքի նկարագիրը	Չ/մ	Քանակ	Միավ. գինը հազար դրամ	Ընդամենը հազար դրամ
1	2	3	4	5	6	7
		Ջրախմոց				
4	22-74 գ-0.5 շուկա	պողպատե կիսախողովակների տեղադրում Φ530x6մմ	գծմ	6.9881	35.775	250.000
		Ընդամենը				***250.000***
		ԱԱՀ 20%				***50.000***
		Ընդամենը				***300.000***

Պատվիրատու 2
Ռազմավարական զարգացման գործակալություն ՀԿ

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*
«Դիլիջան համայնքի Գոշ բնակավայրի ,,Եղջերվասար,, արոտավայրի ջրագծի և ջրախմոցի կառուցում»
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

	NN	Աշխատանքի նկարագիրը	Չ/մ	Քանակ	Միավ. գինը հազար դրամ	Ընդամենը հազար դրամ
1	2	3	4	5	6	7
		-				
		Ընդհանուր տեղամաս				
1	1-1588	4 -րդ կարգի բնահողի մշակում էքսկավատորով	1000մ³	0.050	652.754	32.638
2	1-1587	3 -րդ կարգի բնահողի մշակում էքսկավատորով	1000մ³	0.270	511.044	137.982
3	1-961	3-րդ կարգի բնահողի քանդում ձեռքով խրամուղում	մ³	15.0	2.507	37.611
4	23-1 1-1184	նախապատրաստական շերտի իրականացում 100մմ հաստ փափուկ բնահողից տոփանումով	մ³	40.0	2.278	91.137

5	22-117	Պոլիէթիլենային խողովակների տեղադրում հողի մեջ DN32x2,4 /12,5մթն/ /փորձարկումով/	մ	1010.0	0.692	699.171
6	22-366	պոլիէթիլենե քառաբաշխիչ DN32x32x32x32	հատ	4	2.865	11.460
7	22-366	ճկուն կցորդիչ DN32	հատ	4	2.168	8.673
8	22-366	պոլիէթիլենե անկյունակ DN32	հատ	17	2.587	43.987
9	22-384	արույրե փական Φ32մմ	հատ	2	7.273	14.547
10	22-314	խողովակների ախտահանում	կմ	1.010	68.155	68.837
11	11-2	Բնահողի տոփանում խճով դիտահորի տակ	100մ²	0.005	40.195	0.201
12	11-11	բետոնե հատակի կառուցում դիտահորի տակ B-7.5բետոնով 100մմ հաստ	մ³	0.20	35.437	7.087
13	9-153	պողպատե խողովակից դիտահորի տեղադրում	տն	0.07	59.191	4.143
14	շուկա	Պողպ. խողովակ Φ530մմ	մ	0.50	68.711	34.355
15	շուկա	կափարիչ պողպ.թերթից 3մմ	մ²	0.283	12.657	3.582
16	շուկա	ծխնի L-150	հատ	1	0.694	0.694
17	շուկա	պատյան պողպ. խողովակից Φ50մմ	մ	8.00	2.057	16.457
18	26-79	պողպատե էլեմենտների հակակոռոզիոն ներկում բիտումային մածիկով	100մ²	0.02	134.369	2.687
19	15-614	պողպատե խողովակի հակակոռոզիոն ներկում 2 անգամ	100մ²	0.02	115.013	2.300
20	1-1635	բնահողի հետլիցք բուլդոզերով	1000մ³	0.320	80.890	25.885
21	1-968	փափուկ բնահողի հետլիցք ձեռքով	մ³	15.00	1.042	15.628
22	1-1184	բնահողի տոփանում	մ³	335.00	0.240	80.547
23	1-968	ավելորդ բնահողի փռում տեղում ձեռքով	մ³	40.00	1.042	41.676
24	1-1612 1-1618	ժամանակավոր ճանապարհի կառուցում 3-րդ կարգի բնահողի կտրումով մեխանիզմով	1000մ³	0.085	354.771	30.156
25	1-1612 1-1618	տեղանքի հարթման համար 3-րդ կարգի բնահողի կտրում մեխանիզմով	1000մ³	0.020	354.771	7.095
		Աղբյուրակապ			0.000	
1	1-1587	3 -րդ կարգի բնահողի մշակում էքսկավատորով	1000մ³	0.005	511.045	2.555
2	1-961	3-րդ կարգի բնահողի քանդում ձեռքով	մ³	0.50	2.507	1.254
3	շուկա	Պողպ.խողովակ Φ18x2մմ	մ	0.60	0.625	0.375

4	շուկա	պողպատե խողովակակտոր երկկողմանի արտաքին պարուրակով Φ57մմ	մ	2.00	2.747	5.494
5	շուկա	պողպատե.խողովակ Φ57մմ	մ	1.40	2.798	3.917
6	22-119	Պոլիէթիլենային ծակոտկեն խողովակ d=160	մ	0.92	10.795	9.932
7	22-384	գնդային փական Φ50մմ	հատ	1	9.162	9.162
8	22-366	կցաշուրթ Φ50մմ	հատ	2	3.559	7.118
9	22-366	պոլիէթիլենե անցում DN50/32	հատ	2	3.143	6.285
10	22-117	Պոլիէթիլենային խցափակիչ DN160	հատ	2	0.969	1.938
11	շուկա	Պողպ.անկյունակ L63x5 , 2800մմ	մ	2.80	2.586	7.241
12	շուկա	Պողպ.անկյունակ L45x4 , 2735մմ	մ	2.735	1.446	3.956
13	շուկա	Պողպ.թերթ 2 մմ հաստ.	կգ	11.85	0.540	6.402
14	շուկա	Պողպ.ականջիկ	հատ	2	1.388	2.776
15	շուկա	Պողպ. բռնակ	հատ	1	0.694	0.694
16	շուկա	ծխնի	հատ	2	0.694	1.388
17	շուկա	կախովի փական	հատ	1	3.470	3.470
18	շուկա	Պողպ.թերթ 4 մմ հաստ.	կգ	1.50	0.541	0.811
19	22-362	պողպատե ձևավոր մասերի տեղադրում	տն	0.02	1564.092	31.282
20	11-11	Բետոնե նախապատրաս-տական շերտ B 15 մ.բ.մ.բ., W4, F150	$մ^3$	0.18	71.659	12.899
21	6-15	բետոնե հատակ B 22.5 մ.բ.,W6, F150	$մ^3$	0.12	77.776	9.333
22	6-128	պատերի կառուցում B 22.5, W6, F150	$մ^3$	1.15	103.419	118.932
23	8-28.	Կավե փականի ստեղծում	$մ^3$	0.10	16.603	1.660
24	11-6	գլաքարի շերտ/15-40/մմ h=20սմ	$մ^3$	0.50	12.617	6.309
25	11-5	կոպիճի շերտ/3-7/մ h=15սմ	$մ^3$	0.40	6.936	2.774
26	11-5	ավազի շերտ/0.5-1/մմ h=10սմ	$մ^3$	0.25	6.733	1.683
27	շուկա	պոլիէթիլենային թաղանթ 0.5մմ	$մ^2$	2.50	0.416	1.041

28	շուկա	դիաֆրագմա	կգ	0.30	0.555	0.167
29	շուկա	խամուտային անցում Φ160-Φ50	հատ	1	2.499	2.499
30	շուկա	անցում Φ50xde50	հատ	2	1.666	3.331
31	1-968	բնահողի հետլիցք ձեռքով	մ³	2.5	1.042	2.605
32	1-968	ավելորդ բնահողի փռում տեղում ձեռքով	մ³	3.0	1.042	3.126
33	15-614	պողպատե խողովակի հակակոռոզիոն ներկում 2 անգամ	100մ²	0.03	115.013	3.450
		Ջրախմող				
1	1-1612	ջրախմոցի երկայնքով բնահողի կտրումով մեխանիզմով տեղափոխելով մինչև 10մ փռելով տեղում	1000մ³	0.0033	92.901	0.307
2	1-969	նույնը ձեռքով	մ³	0.70	1.282	0.898
3	11-6	խճի նախաշերտ 10սմ	մ³	6.8	16.256	110.541
4	22-74 գ-0.5 շուկա	պողպատե կիսախողովակների տեղադրում Φ530x6մմ	գծմ	5.0119	35.775	179.301
5	շուկա	պողպատե խողովակների կիսում Φ530x6մմ	գծմ	6.00	2.290	13.739
6	9-153	Մետաղական շինվածքներ կիսախողովակների տեղադրման համար	տն	0.1955	59.191	11.572
7	շուկա	Պողպ.քառակուսի խողովակ 100x100x5մմ	մ	10.12	7.635	77.261
8	շուկա	Պողպ.թերթ 6մմ	տն	0.0104	537.193	5.587
9	շուկա	Պողպ.թերթ 5մմ	տն	0.0173	534.140	9.241
10	շուկա	Պողպ.խողովակΦ15մմ	մ	24.02	0.640	15.371
11	շուկա	Պողպ.խողովակ Φ32մմ	մ	4.30	0.944	4.059
12	22-366	պողպատե եռաբաշխիչ Φ32x32x32	հատ	1	5.873	5.873
13	22-366	պողպատե անկյունակ Φ32	հատ	5	1.998	9.988
14	22-383	գնդային փական Φ 32մմ	հատ	3	7.379	22.137
15	շուկա	ճկուն կցորդիչ Φ32	հատ	2	1.249	2.499
16	շուկա	շերտապողպատ -40x4մմ	կգ	0.600	0.694	0.416
17	1-962	4-րդ կարգի բնահողի քանդում ձեռքով	մ³	1.00	4.431	4.431

18	6-20	բետոնե հիմքի կառուցում B-7.5 մակնիշի	մ³	1.10	45.717	50.289
19	1-968	ավելորդ բնահողի փռում տեղում ձեռքով	մ³	1.00	1.042	1.042
20	15-614	մետաղական էլեմենտների հակակոռոզիոն ներկում 2 անգամ	100մ²	0.27	115.013	31.053
		Ընդամենը				***2250.000***

* Կապալառուն աշխատանքները կատարում է Քաջարանի, Գոշ բնակավայրում հասցեում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ 1

Դիլիջանի համայնքապետարան
Քաջարան, Մյասնիկյան 55
ՀՎՀՀ 07618909
ՀՀ 900402051248
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն

Համայնքի ղեկավար Ա. Մանթրոսյան
_____
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

,,Արտշին-1,, ՍՊԸ
Քաջարան, Կարապետյան 9
ՀՎՀՀ 01277633
ՀՀ 11811006695800
«ԱՅԴԻ բանկ» ՓԲԸ

Տնօրեն Ա. Դավթյան
_____
/ստորագրություն/
Կ.Տ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ 2

<<Ռազմավարական զարգացման գործակալություն>> ՀՀԿ
Բանկը՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050022400701001
ՀՎՀՀ 01831308
Նախագահ՝ _____
Լիազորված անձ _____
_____
/ստորագրություն/

Հավելված թիվ 2
« 21 » 08 2020թ. կնքված
ՀՀ-ՏՄԴՀ-ԳՀԱՇՁԲ-20/19-1 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

« Դիլիջան համայնքի Գոշ բնակավայրի ,,Եղջերվասար,, արոտավայրի ջրագծի և ջրախմոցի կառուցում »
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	Դիլիջան համայնքի Գոշ բնակավայրի ,,Եղջերվասար,, արոտավայրի ջրագծի և ջրախմոցի կառուցում	21.08.2020թ.	01.11.2020թ.
ԸՆԴԱՄԵՆԸ			

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ 1

Դիլիջանի համայնքապետարան
Ք. Դիլիջան, Մյասնիկյան 55
ՀՎՀՀ 07618909
ՀՀ 900402051248
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն

Համայնքի ղեկավար Ա. Սանթրոսյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

,,Արտշին-1,, ՍՊԸ
Ք. Երևան, Կարապետյան 9
ՀՎՀՀ 01277633
ՀՀ 11811006695800
«ԱՅԴԻ բանկ» ՓԲԸ

Տնօրեն Ա. Դավթյան
/ստորագրություն/
Կ.Տ

Դարձ հրատարակ 2.
«Դարձ նախագծանախահաշվային փաստաթղթերի
գործնական հանձնարարություն»
ք. Երևան, Հայ գեղարվեստի 4/1
Հրատարակչության տնօրեն Գ. Դարձարյան

Հավելված N 3
« 21 » 08 2020թ. կնքված
ՀՀ-ՏՄԴՀ-ԳՀԱՇՁԲ-20/19-1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
10	45400000	Դիլիջան համայնքի Գոշ բնակավայրի ,,Եղջերվասար,, արոտավայրի ջրագծի և ջրախմոցի կառուցում	0	0	0	0	0	0	0	1275000	2550000	2550000	2550000	2550000	**2550000**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ 1

Դիլիջանի համայնքապետարան
Ք. Դիլիջան, Մյասնիկյան 55
ՀՎՀՀ 07618909
ՀՀ 900402051248
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն

Համայնքի ղեկավար Ա. Սաֆարոսյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

,,Արտշին-1,, ՍՊԸ
Ք. Երևան, Կարապետյան 9
ՀՎՀՀ 01277633
ՀՀ 11811006695800
«ԱՅԴԻ բանկ» ՓԲԸ

Տնօրեն Ա. Դավթյան
/ստորագրություն
Կ.Տ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ 2

<Ռազմավարական զարգացման գործակալություն>>
ՀԿ
Բանկը՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050022400701001
ՀՎՀՀ 01831308
Նախագահ՝ _____
Լիազորված անձ _____
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 4
« » 2020 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
« » 2020 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը
պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն